ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.10.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/211

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-130-21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, մալուխների, մալուխային պատրաստածքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.08.2021թ.-ի թիվ 26/26-1/13524-2021 գրությամբ «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 18.08.2021թ.-ի Ե/40/2186-21 գրության հիման վրա, 24.08.2021թ.-ին «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 24.08.2021թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 25.08.2021թ.-ի թիվ 450-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, ընթացակարգի քննությունը 06.09.2021թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

08.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/211 համարի ծածկագիրը:

15.09.2021թ.-ին և 24.09.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.09.2021թ.-ին:

2. **<u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 18.08.2021թ. Ե/40/2186-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար՝ «մալուխներ, մալուխային պատրաստվածքներ» ձեռքբերելու նպատակով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-130/21» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2021թ. №4 արձանագրության (որոշման) համաձայն, թիվ 4 և 5 չափաբաժիններով նախատեսված «մալուխի և հաղորդալարի»

մատակարարման նպատակով ընտրված մասնակից է ճանաչվել «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ն:

Անգործության ժամկետի ավարտից հետո 2021թ. օգոստոսի 2-ին «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագրի նախագիծ, առաջարկելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով որակավորման և պայմանագրի ապահովումների հետ միասին, կից գրությամբ, ներկայացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված 10 աշխատանքային օրվա ընթացքում «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ն չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-130-21» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 03.09.2021թ.-ի թիվ Ե/40/2345-21 հայտնել է նաև հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ կողմից, սեփական կարիքների համար մալուխների, մալուխային պատրաստվածքների ձեռք բերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-130/21» ծածկագրով գնման ընթացակարգ, որին ի թիվս մյուս մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ն:

23.07.2021թ. թիվ 4 արձանագրությամբ «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող մասնակից 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով և վաստակել մալուխների և մալուխային պատրաստվածքների մատակարարման իրավունք: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը անգործության ժամկետի ավարտից հետո 02.08.2021թ. մասնակցին ուղարկվել ենք պայմանագրի նախագիծ և առաջարկել ենք այն կնքել 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ որակավորման ապահովման և պայմանագրի ապահովման հետ միասին մուտքագրել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի փաստաթղթաշրջանառության համակարգ:

16.08.2021թ. մասնակիցը բանավոր հրաժարվել է պայմանագիրը ներկայացնելուց՝ ինչից հետո 17.08.2021թ. մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկվել է հարցում՝ (Հարգելի մասնակից, քանի որ 16.08.2021թ. վերջացել է Ձեր ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-130/21-01/221

ծածկագրով պայմանագիրը ներկայացնելու վերջնաժամկետը, առաջարկում ենք Ձեզ հետադարձ պատասխանով հաստատել պայմանագիրը ստորագրելուց հրաժարվելու փաստը: Կամ եթե փոստային առաքման միջոցով ուղարկել եք կնիքված և ստորագրված պայմանագիրը ապա ներկայացնել տվյալ փաստը հաստատող փոստային առաքման կտրոնը): Պատասխան չստանալուց հետո «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն № Ε/40/2186-21 առ 18.08.2021թ. ֆինանսների նախարարություն է ուղարկել գրություն՝ պայմանագիրը ստորագրելուց հրաժարվելու վերաբերյալ:

Պայմանագիրը բերելու վերջնաժամկետից հետո՝ փոստային առաքման միջոցով ստացել ենք «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի կողմից ուղարկված նամակը հետևյալ պարունակությամբ՝ պայմանագրի երկու բնօրինակ, երկու որակավորման ապահովում: Պայմանագրի ապահովումը բացակայում է:

Հարգելի բողոք քննող անձ, ի պատասխան 01.09.2021թ. ուղարկված նամակի Ձեզ ենք ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- Հայփոստի միջոցով ստացած նամակի երկու կողմերը,

- Պայմանագիրը,

- Որակավորման ապահովումը,

- 17.08.2021թ. մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկված նամակը:»:

3. <u>«Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 29.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.08.2021թ.-ի թիվ 26/26-1/13524-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը 31.08.2021թ.-ին ներկայացվելով ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում հայտնել է հետևյալը.

««ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի վարույթում նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2021/238 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-130/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին /այսուհետ նաև Ընթացակարգ/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 4-5-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշել անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 02.08.2021թ., համապատասխանաբար վերջնաժամկետ է սահմանվել 16.08.2021թ. ներառյալ:

Հաշվի առնելով, որ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի գործունեության (գտնվելու վայրի) հասցեն ք. Երևանն է, իսկ Պատվիրատուն գտնվել է Արմավիրի մարզում, ք. Մեծամորում, ապա ՍՊԸ-ն սահմանված ժամկետի վերջին օրը 16.08.2021թ. փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և կից փաստաթղթերը՝ օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն համաձայն «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն 4 և 5-րդ չափաբաժնի մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից /ըստ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրության «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում կնքված պայմանագիրը և որակավորման-պայմանագրի ապահովումը չի ներկայացել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակ-ցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ... մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնվածով:

Ինչպես արդեն հայտնել ենք, «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-130/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 4 և 5-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշել անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 02.08.2021թ., համապատասխանաբար վերջնաժամկետ է սահմանվել 16.08.2021թ. ներառյալ :

«ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն 16.08.2021թ. փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և կից փաստաթղթերը՝ օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ հաշվի առնելով, որ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ի գործունեության (գտնվելու վայրի) հասցեն ք. Երևանն է, իսկ Պատվիրատուն գտնվել է Արմավիրի մարզում, ք. Մեծամորում, ապա ՍՊԸ-ն այդ պատճառով է որոշում կայացրել ստորագրած պայմանագիրը և կից փաստաթղթերը՝ օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին փոստային առաքման միջոցով:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն համաձայն «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն 4 և 5 չափաբաժնի մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից /ըստ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրության «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում կնքված պայմանագիրը և որակավորման-պայմանագրի ապահովումը չի ներկայացել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին/:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

1. Այսպիսով, «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն, խստիվ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց (02.08.2021թ.) հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 16.08.2021թ. ներառյալ), այն է 16.08.2021թ. փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և պայմանագրի ապահովումը օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում կնքված պայմանագիրը և որակավորման-պայմանագրի ապահովումը չի ներկայացել Պատվիրատուին /տես՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրություն/:

Հատկանշական է, որ 02.08.2021թ. «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, ավելին, օրենքով թույլատրելի եղանակով Ընկերությունը ստորագրված պայմանագիրը ներկայացրել է պատվիրատուին, սակայն պատվիրատուն անտեսելով վերոհիշյալը որոշել է զրկել «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված պայմանագիր կնքելու իրավունքից:

Մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ... մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնվածով: Իսկ ինչպես արդեն նշել ենք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի և պատվիրատուին ներկայացնի այդ պայմանագիրը, ինչը տվյալ դեպքում կատարել է:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ պայմանագիրը Պատվիրատուին ներկայացվել է նաև սահմանված ժամկետում, այն է վերջին 10-րդ օրը:

Պետք է փաստել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը

Այսպիսով, ըստ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Պայմանագրի նախագիծը ուղարկվել է մասնակցին 02.08.2021թ., հաջորդ օրվանից հաշվարկված վերջին 10-րդ աշխատանքային օրը ստացվում է 16.08.2021թ., որ օրն էլ ՍՊԸ-ն «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը կից փաստաթղթերով:

Գտնում ենք, որ նման փաստական հանգամանքներում «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել պայմանագրից կնքելու հրաժարում, քանի որ, ինչպես արդեն նշվել է, 16.08.2021թ. «ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը:

Հատկանշական է նաև այն փաստը, որ նույն փաստական հանգմանանքներով՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ բազմաթիվ ընթացակարգեր, որոնք բողոքներ քննող անձի կողմից մերժվել են և մասնակիցները չեն ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում /օրինակ՝ ՍՅ-ՆԳ-2021/162/:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից խնդրում ենք «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին

մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:»

Մասնակիցը 22.09.2021թ.-ին ներկայացված դիրքորոշման լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Թիվ ՍՑ-ԼՕ-2021/211 ծածկագրով ընթացակարգի քննության վերաբերյալ նշանակված նիստի ընթացքում բողոքներ քննող անձի կողմից հարցադրում եղավ կապված պայմանագրի ապահովումը՝ պայմանագրի ն որկավորման ապահովման հետ միասին փոստային առաքման միջոցով ծրարում չկցելու վերաբերյալ:

Վերը նշված փաստի առթիվ հայտնում ենք, որ Ընկերության մոտ պահպանվել է պայմանագրի ապահովման բնօրինակից արված սկանավորված օրինակը, ինչպես նաև փոստային առաքման միջոցով ուղարկված լինելու փաստը հավաստող համապատասխան անդորրագիրը, որտեղ նշվում է նաև ծրարի քաշը և եթե հնարավորություն լինի Պատվիրատուն առձեռն բողոքներ քննող անձին ներկայացնի ծրարը ամբողջական փաթեթով, ապա մեր ընկերությունը պատրաստ է սեփական ուժերով ներկայացնել սարք, որով հնարավորություն կստանանք նորից ստուգել ծրարի քաշը ն տանել համեմատական: »:

4. <u>ՍՑ-ԼՕ-2021/211 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից մալուխների, մալուխային պատրաստածքների ձեռքբերման նպատակով 08.07.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-130-21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ն:

ii. «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-130-21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 23.07.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ին:

iv. 26.07.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

v. Պատվիրատուն 02.08.2021թ.-ին Մասնակցի էլ. փոստի հասցեին ներկայացնելով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-130-21» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ խնդրել է պայմանագրի նախագիծը և առաջարկը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագիրը՝ այն կից գրությամբ մուտքագրելով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի փաստաթղթաշրջանառության համակարգ:

18.08.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-130/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարության համաձայն՝ Ընթացակարգը՝ 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով, հայտարարվում է չկայացած՝ պայմանագիր չկնքվելու հանգամանքով պայմանավորված:

Մասնակցի կողմից տրամադրված փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 5296, կոդը՝ RG034040896AM/ համաձայն՝ «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ն 16.08.2021թ.-ին պատվիրված նամակով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին (հասցե՝ ք. Մեծամոր) ուղարկել է առաքանի:

www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում պարզվել է, որ փոստային կտրոնի /առաքանի՝ թիվ 5296, կոդը՝ RG034040896AM/ համաձայն՝ առաքանին հանձնվել է հասցեատիրոջը՝ 23.08.2021թ.-ին, ժամը 14:30-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.08.2021թ.-ի թիվ 26/26-1/13524-2021 գրությամբ «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին

հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից մալուխների, մալուխային պատրաստածքների ձեռքբերման նպատակով 08.07.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-130-21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 23.07.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

27.05.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր: Պատվիրատուն, 03.06.2021թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-130-21» ծածկագրով պայմանագրի նախագիծը, խնդրել է տասն աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

18.06.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել պայմանագրի, ինչպես նաև պայմանագրի ու որակավորման ապահովումները և Հանձնաժողովը որոշել է «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-130-21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Անդրադառնալով «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի կողմից 16.08.2021թ.-ին պատվիրված նամակով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին՝ ք. Մեծամոր հասցեով առաքանու ուղարկմանը, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշում կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պետք է պարզել ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով, որոնց հիման վրա Բողոքներ քննող անձը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակիցը ներկայացրած դիրքորոշմամբ՝ չի ներկայացվել որևէ ապացույց առ այն, որ «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի կողմից 16.08.2021թ.-ին Պատվիրատուին ուղարկված առաքանիում առկա է եղել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-130/21» ծածկագրով պայմանագրի կատարման ապահովումը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Հատկապես այն պարագայում, երբ Պատվիրատուն հայտնել է, որ պայմանագիրը բերելու վերջնաժամկետից հետո՝ փոստային առաքման միջոցով ստացվել է «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ի կողմից ուղարկված նամակը, պայմանագրի երկու բնօրինակները, երկու որակավորման ապահովումները, իսկ պայմանագրի ապահովումը բացակայել է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.08.2021թ.-ի թիվ 26/26-1/13524-2021 գրությամբ «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/211 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Կա ընդ Կո Թրայդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**